

## ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ.

Համայնքը	Միջոցառման անվանումը	օրը	Ժամը	Անցկացման վայրը
Գեղասար	Ավագնու հերթական նիստ	21.02.2020թ	11:00	Գեղասար համայնքի ղեկավարի աշխատասենյակ (գ.Գեղասար 3փ, 2 նրբ., թիվ 2)

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. փետրվարի 21-ին՝ ժամը 11.00-ին Գեղասար համայնքի ղեկավարի աշխատասենյակում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

ժամը՝ 11.00

1.Գեղասար համայնքի ավագանու 2020թ. փետրվարի 21-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Վ.Գրիգորյան

2. Գեղասար համայնքի 2019թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին:

զեկ. Վ.Գրիգորյան

3. ՀՀ Լոռու մարզի Գեղասարի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

Զեկ. Վ.Գրիգորյան

4. Գեղասար համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

զեկ.Վ.Գրիգորյան

5. Գեղասար համայնքի 2020թվականի տարեկան աշխատանքային պլանի մասին:

զեկ. Վ. Գրիգորյան

6. Գեղասար համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

զեկ. Վ.Գրիգորյան

**ՆԱԽԱԳԻՇ 4-Ա**

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
21.02.2020ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ  
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

*/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի 6-րդ մասով Գեղասար համայնքի ավագանին որոշում է .

Հաստատել Գեղասար համայնքի 21.02.2020թվականի 2-րդ հերթական նիստի օրակարգը .

1. Գեղասար համայնքի 2020թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվություններին մասին :

2. ՀՀ Լոռու մարզի Գեղասարի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայություն պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցներին թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

3.Գեղասար համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն և հատկացնելու մասին :

4. Գեղասար համայնքի 2020թվականի տարեկան աշխատանքային պլանի մասին :

5.Գեղասար համայնքի ավագանու հաջորդ հերթական նիստի օրը որոշելու մասին:

## ՆԱԽԱԳԻՆ 5-Ն

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ  
ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ  
ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԱՉԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով «Հայաստանի Հանրապետության բյուջե տային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Գեղասար համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Գեղասար համայնքի 2019թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել 2019թվականի Գեղասար համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, 11-րդ, 28-րդ կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Գեղասարի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Գեղասար համայնքի ղեկավարին համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին մեկ շաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի պաշտոնակատարին:

3. Ուժը կորցրած ճանաչել Գեղասար համայնքի ավագանու 2020թվականի հունվարի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասարի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասրկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 3-Ա որոշումը:

4. Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերը ուժի մեջ են մտնում Գեղասարի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքի ավագանու

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶՔԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ**

**Աշխատակիցների թվաքանակը՝ 7**

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը ամսական
<b>Քաղաքական և հայեցողական պաշտոններ</b>				
1	Համայնքի ղեկավար	1	220000	220000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	160000	160000
	<b>Ընդամենը</b>	<b>2</b>	<b>380000</b>	<b>380000</b>
<b>Համայնքային ծառայության պաշտոններ</b>				
3	Աշխատակազմի քարտուղար	1	160000	160000
4	Առաջատար մասնագետ	1	157000	157000
5	Առաջին կարգի մասնագետ	1	130000	130000
	<b>Ընդամենը</b>	<b>4</b>	<b>447000</b>	<b>447000</b>
<b>Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ</b>				
6	Բանվոր խմբի ջրի բաշխման	0.75	96000	72000
7	Հավաքարար	0.5	90000	45000
	<b>Ընդամենը</b>	<b>1.25</b>	<b>186000</b>	<b>117000</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>7.25</b>	<b>1013000</b>	<b>944000</b>

**ՆԱԽԱԳԻԾ 7-Ա**

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ  
ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համայնքի ավագանու 2017թվականի մայիսի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 20-Ա որոշմանը համապատասխան , հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկվող հանձնաժողովի եզրակացությունները ` Գեղասար համայնքի ավագանին որոշում է .

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի :
2. Համայնքի ղեկավարին ` սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Հավելված**

**ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքի ավագանու  
2020 թվականի փետրվարի 21-ի N 7-Ա որոշման**

**ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՒՑ**

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՄՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ**

1. Յայլոյան Նարինե Ազատի – տաս հազար դրամ, երեխայի ծննդյան գումար,
2. Ֆիդանյան Լուսինե Եփրեմի – տաս հազար դրամ, երեխայի ծննդյան գումար,
3. Մկրտչյան Սարգիս Վոլոդյայի – երեսուն հազար դրամ, ոսց օգնություն:

**ՆԱԽԱԳԻԾ 8-Ա**

---

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ  
ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ  
ՄԱՍԻՆ



<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացրած համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակման մեթոդական ուղեցույցը՝ համայնքի ավագանին որոշում է .

1. Հաստատել Գեղասար համայնքի 2020թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի :

**Հավելված**  
**Գեղասար համայնքի ավագանու**  
**2020թվականի փետրվարի 21-ի,**  
**թիվ 8-Ա որոշմամբ**

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

---

*/Զեկ. ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի  
Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Գեղասար  
համայնքի ավագանին որոշում է .

1.Գեղասար համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել  
2020թվականի ապրիլի 06-ը :

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔ  
ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**



**Կազմել է՝ համայնքի ղեկավար ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ**

**Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2020թ փետրվարի 21-ի, թիվ 8-Ա որոշմամբ**

**ԳԵՂԱՍԱՐ 2020թ.**

## Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ-----	
--	3
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) -----	
	7
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2020Թ. ԾՐԱԳԻՐԸ -----	
--	23
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ -----	
	30
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ -----	
---	32

## Ներածություն

Գեղասար համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ-ի) մշակման հիմնական նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (ՀՀԶԾ-ով) սահմանված համայնքի տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների և ծրագրերի իրագործումը:

**ՏԱՊ** – ի մշակման մեթոդական հիմք է հանդիսացել «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագետների կողմից 2017 թվականին պատրաստված «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման» մեթոդական ուղեցույցը:

**ՏԱՊ-ի 1-ին բաժնում** ներկայացված են՝ համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (**Աղյուսակ 1**), ոլորտային նպատակները (**Աղյուսակ 2**):

**ՏԱՊ-ի 2-րդ բաժնում** բերված են համայնքի 2019 թվականի համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերը (**Աղյուսակ 3**) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 4**), ինչպես նաև այն ծրագրերը, որոնք դեռևս ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով (**Աղյուսակ 4**):

**ՏԱՊ-ի 5-րդ բաժնում** ներկայացված է՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2020 թվականի ծրագիրը (**Աղյուսակ 5**):

**ՏԱՊ-ի 6-րդ բաժնում** բերված է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 6**):

**ՏԱՊ-ի 7-րդ բաժնում (Աղյուսակ 7)** ներկայացված է՝ տեղեկատվություն ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ:

### 1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Ըստ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 36-Ն որոշմամբ հաստատված ՀՀԶԾ-ի՝ **համայնքի տեսլականն է՝ Գեղասար համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, հատապտուղների վերամշակման, մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և**

**մշակութային զարգացած ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ տարածք:**

Ստորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները: Ցուցանիշի ելակետային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի 2020 թվականի նոյեմբերի 1- ի դրությամբ ֆիքսված արժեքին 2020 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կանխատեսվող ցուցանիշի ավելացումն է, հաշվի առնելով համայնքում առկա զարգացումները և միտումները, ինչպես նաև նախորդ տարիների փորձը: Ցուցանիշի թիրախային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի պլանավորվող արժեքն է, այսինքն՝ այն արժեքը, որին կհասնի համայնքը 2020 թվականին ՏԱՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում:

**ՏԱՊ**-ում ոլորտների և ծրագրերի ազդեցության վերջնական արդյունքի որոշ որակական ցուցանիշների գնահատման համար կիրառվել է 10 բալանոց սանդղակ՝ 1- շատ վատ, 2 – վատ, 3 – բավականին վատ, 4 – ավելի շատ վատ, քան լավ, 5 – միջին՝ ոչ լավ, ոչ վատ, 6 - ավելի շատ լավ, քան վատ, 7 – բավականին լավ, 8 – լավ, 9 – շատ լավ, 10 – կատարյալ:

**Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները**

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	102.5	
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	917	
Համայնքում տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ)	29000.0	

Ստորև սահմանված են համայնքի ոլորտային նպատակները՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների առանձին բնագավառների (ոլորտների):

**Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները**

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>			
Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի մատուցված հանրային ծառայություններից	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	ավելի շատ լավ, քան վատ
	Համայնքի բյուջեի	102.5	

	սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %		
<b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b>			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
<b>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:	Գիշերային լուսավորության հենասյունների և լուսատուների ավելացում		
	Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)	ավելի շատ վատ, քան լավ	միջին՝ ոչ լավ, ոչ վատ
<b>Ոլորտ 5. Հողօգտագործում</b>			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
<b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b>			
Բարձրացնել համայնքային ենթակայության ճանապարհների շահագործման և պահպանման ծառայությունների որակը և	Համայնքային ենթակայության ճանապարհների	ավելի շատ վատ, քան լավ	միջին՝ ոչ լավ, ոչ վատ

<p>ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:</p>	<p>սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)</p>		
	<p>ներհամայնքային ճանապարհների խճապատում</p>		
<p><b>Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ</b></p>			
<p>Խթանել համայնքում գործարար միջավայրի բարելավումը ու զարգացումը:</p>	<p>Համայնքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների ( անհատ ձեռներեցների) թիվը 3</p>		
<p><b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b></p>			
<p>2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	-	-	-
<p><b>Ոլորտ 10. Առողջապահություն</b></p>			
<p>2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	-	-	-
<p><b>Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</b></p>			
<p>2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	-	-	-
<p><b>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն</b></p>			
<p>Ապահովել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և մատչելիությունը:</p>	<p>Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ</p> <p>Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից</p>	<p>այո</p> <p>ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>այո</p> <p>միջին՝ ոչ լավ, ոչ վատ</p>
<p><b>Ոլորտ 13. Գյուղատնտեսություն</b></p>			
<p>2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր</p>	-	-	-



և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:			
<b>Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա</b>			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
<b>Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն</b>			
Ապահովել համայնքի բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից (հարցումների հիման վրա)	ավելի շատ վատ, քան լավ	ավելի շատ լավ, քան վատ
	Տեղափոխված աղբի ծավալը, տոննա		
<b>Ոլորտ 16. Զբոսաշրջություն</b>			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
<b>Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն</b>			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:			

## 2. Համայնքի 2020 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով:

### Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	
-----	------------------	---------------------------	--

<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>			
1.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	16467.0	
<b>Ընդամենը</b>		<b>16467.0</b>	
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
1.	Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը	26000.0	ՀՀ պետբյուջեից
2.	Գիշերային լուսավորության հենասյուների և լուսատուների ավելացում	1000.0	
<b>Ընդամենը</b>		<b>27000.0</b>	
<b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b>			
1.	Համայնքային ենթակառուցվածքային ճանապարհների բարեկարգում	1350.0	
<b>Ընդամենը</b>		<b>1350.0</b>	
<b>Ոլորտ 12.Սոցիալական պաշտպանություն</b>			
1.	Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին	470.0	
<b>Ընդամենը</b>		<b>470.0</b>	
<b>Ոլորտ 15.Շրջակա միջավայրի պահպանություն</b>			
1.	Համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում	960.0	
<b>Ընդամենը</b>		<b>960.0</b>	
<b>Ընդհանուր</b>		<b>46247.0</b>	

**Ստորև ներկայացված են** ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների:

**Աղյուսակ 4. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների**

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>					
<b>Ոլորտային նպատակ .</b> Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:		<b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> 1. Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, ՀՈԱԿ-ների գործունեությունից, մատուցված հանրային ծառայություններից - ավելի շատ լավ, քան վատ 2. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում՝ 23,1%			
<b>Ծրագիր 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում</b>					
<b>Ծրագրի նպատակ.</b> Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը և մատչելիությունը:	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> Աշխատակազմը բնականոն գործել է, բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը - ավելի շատ լավ, քան վատ	<b>Ծրագրի գնահատման համակարգ.</b> ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմ	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
<b>Միջանկյալ արդյունք 1.</b> Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը:	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b> 1 ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների իրազեկվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - բավականին լավ 2.ՏԻՄ-երի կողմից մատուցված համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների թիվը - 3 3.Անշարժ գույքի հարկի	<b>Տեղեկատվական աղբյուրներ.</b> Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ	Համայնքի ղեկավար, աշխատակազմ	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել

	բազայում առկա անճշտությունների նվազեցում - 3%-ով 4. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում - 248 օր				
<b>Միջոցառումներ (գործողություններ) .</b> 1. Աշխատակազմի պահպանություն 2. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգերի սպասարկում 3. Համայնքի անշարժ գույքի կառավարում		<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանման ծախսեր՝ <b>14280.0</b> հազ.դրամ 2. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներ՝ 10 3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 2 4. Համայնքապետարանի շենք և գույք  <b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջեի միջոցներ			
<b>Միջանկյալ արդյունք 2.</b> Բարձրացել է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b> 1. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման փաստացի գումարների տարեկան աճ- 5 %-ով 2. Հարկային պարտականությունները չկատարողների նկատմամբ համայնքի կողմից դատարան ներկայացված հայցադիմումների թիվը- 5 3. Հողի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում- 3 %-ով 4. Գույքահարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում -3 %-ով 5. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքների նվազեցում- 7%-ով	<b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Աշխատակազմի գլխավոր մասնագետ- հաշվապահ, առաջին կարգի մասնագետ	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան արդյունքի, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել
<b>Միջոցառումներ (գործողություններ) .</b> 1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցների վերապատրաստումներ 2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաների ճշտում, հարկատուների ծանուցում		<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b> 1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցներ՝ 1 2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաներ՝ առկա է 3. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքներ՝ <b>307.5</b>			
<b>Միջանկյալ արդյունք</b>	<b>Ելքային ցուցանիշներ</b>	<b>Տեղեկատվական</b>	Համայնքի ղեկավարի	2020թ. հունվար –	Համապատասխան մասնագետների

<p><b>3. Բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը</b></p>	<p><b>(քանակ, որակ, ժամկետ).</b></p> <p>1. ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքից, մատուցված ծառայությունների մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - ավելի շատ լավ, քան վատ</p> <p>2. ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացված դիմում-բողոքների թվի նվազում - 5 %-ով</p> <p>3. Համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կազմակերպվող բնակիչների ընդունելությունների հաճախականությունը - շաբաթը 1 անգամ</p> <p>4. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը – 2 օր</p>	<p><b>աղբյուրներ</b></p> <p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>տեղակալ, աշխատակազմ</p>	<p>2020թ. դեկտեմբեր</p>	<p>առկայությունը</p>
--	---	---	----------------------------	-------------------------	----------------------

<p><b>Միջոցառումներ (գործողություններ) .</b></p> <p>1. Աշխատակազմի աշխատողների արդյունավետ և թափանցիկ գործունեության ապահովում</p> <p>2. Համայնքի ֆինանսական թափանցիկ և արդյունավետ կառավարում</p> <p>3. Համայնքի գույքի կառավարման բարելավում</p> <p>4. Աշխատակազմում գործող տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի գործունակ աշխատանքային վիճակի պահպանում և շահագործում</p> <p>5. Համացանցային կայքում առկա տեղեկատվության պարբերական թարմացում</p>	<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b></p> <p>1. Աշխատակազմում առկա համակարգչային սարքեր և սարքավորումներ - 3</p> <p>2. Տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր – առկա է</p> <p>3. Աշխատակազմում ֆինանսական (այդ թվում՝ գույքի) կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -1</p> <p>4. Աշխատակազմում տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -</p> <p>5. ՏԻ-անը բնակիչների մասնակցության կարգեր -3</p> <p>6. Համայնքի պաշտոնական համացանցային կայք –առկա է</p>
--	---

**Ծրագիր 2. Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում**

<p><b>Ծրագրի նպատակ.</b></p> <p>Հզորացնել համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունները</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b></p> <p>Աշխատակազմի կառավարման համակարգերը բարելավվել են, աճել են</p>	<p><b>Ծրագրի գնահատման համակարգ.</b></p> <p>ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմ</p>	<p>2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան արդյունքի, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
--	---	---	-------------------------------------	--	--

	աշխատակիցների գիտելիքները և հմտությունները, 10 %-ով				
<b>Միջանկյալ արդյունք 1.</b> Աշխատակազմի աշխատակարգերը և առկա կառավարման (վարչական, ֆինանսական, տեղեկատվական, հեռահաղորդակցության և այլն) համակարգերը բարելավվել են	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b> 1. Աշխատակազմի բարելավված աշխատակարգեր և կառավարման համակարգեր – առկա է 2. ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում - 3 %-ով 3. Մասնագիտական վերապատրաստում անցած համայնքային ծառայողների թիվը - 5 4. Աշխատակազմում կիրառվող տեղեկատվական համակարգերի թիվը - 1 5. Աշխատակազմում օգտագործվող համակարգիչների թիվը -3 6. ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատակիցների կարծիքը բարելավված կառավարման համակարգերի վերաբերյալ - շատ լավ 7. Ծրագրի իրականացման ժամկետը -1 տարի	<b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՏՀԶՎԿ ՀԿ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակություն, բնակիչներ	Աշխատակազմ	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան ենթակառուցվածքների, ֆինանսական ռեսուրսների և մասնագետների առկայությունը
<b>Միջոցառումներ (գործողություններ) .</b> 1. ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատողների մասնագիտական վերապատրաստման կազմակերպում 2. Համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերի խմբագրում 3. Աշխատակազմի աշխատակիցներին անհրաժեշտ համապատասխան տեխնիկական և ծրագրային միջոցներով ապահովում	<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b> 1. Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր 2. Աշխատակազմի ֆինանսական, տեղեկատվական, հեռահաղորդակցության և այլ համակարգեր –առկա է 3. Աշխատակազմի կառուցվածք և կանոնադրություն –առկա է <b>Ֆինանսավորման աղբյուրը՝</b> համայնքի բյուջեի միջոցներ				
<b>Միջանկյալ արդյունք 2.</b> Աշխատակազմի աշխատակիցների տեխնիկական և մասնագիտական կարողությունները բարձրացել են	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</b> 1. Աշխատակազմում ՀԿՏՀ-ի առկայությունը – առկա է 2. ՀԿՏՀ-ում օգտագործվող ծրագրերի թիվը - 1 3. Աշխատակազմում կիրառվող հեռահաղորդակցության	<b>Տեղեկատվական աղբյուրներ</b> Աշխատակազմ, ՏՀԶՎԿ ՀԿ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Աշխատակազմ	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան ենթակառուցվածքների, ֆինանսական ռեսուրսների և մասնագետների առկայությունը

	համակարգերի թիվը -1				
<b>Միջոցառումներ (գործողություններ) .</b> 1.Աշխատակազմի աշխատատեղերի վերազինում ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով 2.Աշխատակազմի գույքի նորացում		<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</b> 1.Աշխատակազմի տեխնիկական սպասարկման անձնակազմի աշխատակիցներ - 2			
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>					
<b>Ոլորտային նպատակ.</b> Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:		<b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b> 1.Գիշերային լուսավորված փողոցների թվի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ - 23 % 2.Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա) - ավելի շատ վատ, քան լավ 3.Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - միջին՝ ոչ լավ, ոչ վատ			
<b>Ծրագիր 1. Համայնքի ջրամատակարարման համակարգերի ընթացիկ նորոգում</b>					
